

ԲԱՌԱՔԵՆԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑՈՒՄ» ՏԵՂ
ԳՏԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոցը», որի առաջին տպագրությունը իրականացվել է 1698 թ., երկրորդը՝ 1728 թ., ուշ միջնադարի Հայ բառարանագրության լավագույն գործերից մեկն է: 1975 թ. հրատարակվում է «Բառգիրք Հայոցի» քննական ընագիրը¹: Բազմաթիվ ձեռագրերի ու հրատարակված օրինակների համադրմամբ, մանրամասն ու գիտական լուրջ ծանոթագրություններով այս բառարանը կարևորվում է Հայերենի բառապաշարի ուսումնասիրության, նոր ստուգարանությունների ու բառաքննական հետազոտությունների տեսակետից: Այգ կարգի բազմաթիվ ստուգարանություններ ու գիտարկումներ՝ հիմնականում համոզիչ ու սպառիչ, հանգիպում ենք հենց բառարանի ծանոթագրություններում:

«Բառգիրք Հայոցը» Հայ բանասիրության, հատկապես բառաքննագրության մեջ լայնորեն օգտագործվելով՝ երբեմն արժանացել է նաև քննադատության: Բերենք Հ. Աճառյանի մի քանի գիտողությունները. «Մեծագույն մասամբ վրիպակների հավաքածու է», «հեղինակը տալիս է նաև բազմաթիվ երրայական հատուկ անունների և հասարակ անունների նշանակությունը, որ հին հեղինակներից է քաղում: Եթե Հայերեն ծանոթ բառերը այնպես այլանդակված են, ինչ պիտի լինեն օտար երրայական բառերը, որոնցով լցված է գիրքը», «այս ընդորից հետևում է, թե պետք է շատ զգուշացնել վերաբերվել սույն բառգրքի հետ և նրա հիշած ձևերը իրրև ճշմարտություն չընդունել»²: Հիշենք, որ այս գիտողությունները վերաբերում են նախքան քննական ընագիրը գոյություն ունեցող հրատարակություններին:

Գ. Ջահուկյանը, կարևորելով Հ. Աճառյանի «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» աշխատությունը և «Բառգիրք Հայոցի» քննական ընագիրը, իրավացիորեն նկատում է, որ «Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» մեծապես շահած կլիներ, եթե նման աշխատանք կատարված լիներ նախքան այդ բառարանի հրատարակումը. շատ բառեր կճշգրտվեին և կստանային ավելի հավաստի մեկնաբանություն»³: Այս հոդվածում Գ. Ջահուկյանը քննում է մոտ 20 բառ պարզելով դրանց ծագումը, ճշգրտելով առաջարկված որոշ ստուգարան

1 Բառգիրք Հայոց. քննական ընագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Աճառյանի. Երևան, 1975 (այսուհետև՝ «Բառգիրք Հայոց»):

2 Տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 1, Երևան, 1971, էջ 9-10:

3 Գ. Ջահուկյան. Ստուգարանական գիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 12, էջ 41:

նություններ, կատարելով բառաքննական այլևայլ դիտողություններ: Գ. Զահուկյանը «Բառգիրք Հայոցի» տվյալներին անդրադարձել է նաև ստուգաբանական-բառաքննական այլ գործերում⁴:

Իհարկե, բառարանում կան նաև աղավաղ ձևեր, կամայական ու սխալ մեկնություններ, սակայն ընդհանուր առմամբ «Բառգիրք Հայոցը» բառարանագրական լուրջ աշխատանք է, որն իր նպաստն է բերում Հայերենի բառապաշարի ըստ Հնարավորին ամբողջական ներկայացման ու քննության գործին:

Քննական բնագրի առկայությունը թույլ է տալիս նորովի գնահատել հիշյալ բառարանը՝ բառերի հավաստիության, վկայված լինելու, ստուգաբանության, գրական կամ բարբառային բնույթի տեսակետից: Նշված հայեցակետերից էլ անդրադառնանք «Բառգիրք Հայոցի» մի քանի բառերի քննությանը:

ԱԿԱ ԴԻՄԱԿԱՆ «Հակառակօղ»: Գրաբարյան այս բառը չունի ոչ Նոր Հայկազյան բառարանը (այսուհետև՝ ՆՀԲ)⁵, ոչ Առձեռն բառարանը (այսուհետև՝ ԱԲ)⁶, իսկ Արմատական բառարանը (այսուհետև՝ Արմ.)⁷ համարում է նոր բառ՝ «կաճառ» իմաստով, որից և ակադեմական: Սակայն մեզ հետաքրքրող բառը որպես փիլիսոփայական տերմին վկայված է V դարից. «Քանզի արդարեւ ակադիմականն և անճառական դէմ ընդդէմ հաստատեալ են աղանդացն»⁸: «Քանզի Արիստոտելականքն կոչին Լիւկէացիք ճեմականք, իսկ Քսենոկրատեանքն Ակադիմականք ճեմականք»⁹: Ամենայն հավանականությամբ «Բառգիրք Հայոցի» վկայած ակադիմականն էլ նույնպես փիլիսոփայական տերմին է, թերևս նշված վկայությունների հիմքի վրա: Նշենք, որ ակադիմական բառը Փիլոնից բերված վկայությամբ նշում է Նորայր Բյուզանդացին՝ ՆՀԲ-ի իր կողմից կատարված լրացումներում¹⁰:

ԱՂՈՒ «թոյն»: Գրաբարում բառի հիմնական իմաստն է «համեղ, անուշ, քաղցր»: Ըստ ՆՀԲ-ի նաև «ժանտ, նենգաւոր, աղուխաբարոյ»: Ըստ ԱԲ-ի՝ 1. աղը համր տեղը, անուշ. 2. «կեղծաւոր, թունաւոր»: Աղու «քաղցր»- աղու «թոյն» իմաստային անցումները հնարավոր են (իմա՝ իմաստային բեռնացում): Սակայն բացառելի չէ և աղու «աղի, դառն» կազմությունը: Ղարաբաղի բարբառում աղուն ունի և «թոյն» իմաստը՝ աղուն խմել դարձվածային արտահայտությամբ: Բացառված չէ, որ «Բառգիրք Հայոցի» աղու-ն նաև թուրք. aḡu, aḡi «թոյն» բառն է:

4 Տե՛ս, օրինակ, «Լրաբեր Հասարակական գիտությունների», 1979, № 3:

* Գլխաբառից հետո չակերտներում բառերի բացատրությունը տրվում է առանց ուղղագրական փոփոխության, այսինքն՝ ինչպես կա «Բառգիրք Հայոցում»:

5 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. Հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

6 Առձեռն բառարան Հայկազեան լեզուի. Վենետիկ, 1865:

7 Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. Հ. 1-4, Երևան, 1971-1979:

8 Փիլոնի Երրայեցւոյ մնացորդք ի Հայս. Վենետիկ, 1826, էջ 203:

9 Դաւիթ Անյաղթի երկասիրութիւնք փիլիսոփայականք. Համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի. Երևան, 1980, էջ 202:

10 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով. Հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 1990:

ԱՅՆԱԿ «օրինակ»: Ակնհայտորեն աւրինակ բառի (որն իրանական փոխառութիւն է) տարբերակներից մեկն է: Օրինակ և օրէն նույնարմատ բառեր են. իրան. aβθēn, aβθenak, Հմմտ. միջ. պրս. aθvenak: Այդ արմատից է և պրս. āθin, ayīn «սովորութիւն, կանոն, կարգ, կերպ, եղանակ, դարդ»¹¹: -Ակ- ձևույթը հուշում է, որ այնակ-ը միջին իրանական լեզուների բնորոշ ձև է, որը կարող էր գործածական լինել և Հայերենի որևէ բարրառում կամ ավանդված որևէ ձևադրում, որից քաղել է բառարանագիրը:

ԱՇԽՈՒԺՈՒՀԻ «թագուհի»: Ըստ ՆՀԲ-ի և Արմ-ի վկայված է XIII-XIV դդ. մի բառարանում: Թեև Արմ-ում աշխոյժը ստուգաբանված է, բայց նրա իրանական ծագումը կասկած չի հարուցում: ՆՀԲ-ն աշխոյժը մեկնում է «արի, առոյգ, հուժկու, բուռն, գորեղ»: Է. Աղայանի կարծիքով «բառի առաջին բաղադրիչը (աշխ) Ավեստայի xsa(y) «կարողանալ» բայի արմատն է. այդ բայը բացի «կարողանալ» ընդհանուր իմաստից, ունեցել է նաև «տիրել, իշխել, թագավորել» նշանակութիւնը: Ըստ այսմ *xšaoja նշանակել է «ուժ ունեցող, զորեղ, հզոր», որ մեր աշխոյժ բառի իմաստն է»¹²: Արևելագետ Ա. Փերիխանյանը իրան. xs և a նախահավելվածով բառերի շարքում գնում է և աշխոյժ՝ աղերսելով իրան. այլ գուգահեռների հետ, միաժամանակ հնարավոր համարում Հայ. աշխոյժ-ի կապը իր. (մանիք. պրթ. axsend) 'xsynd «իշխան» (իրան. xsayant)-ի հետ¹³:

Ուրեմն՝ միանգամայն հնարավոր է աշխոյժուհի-աշխուժուհի «թագուհի» բառի գործածութիւնը, մանավանդ որ SX –հնչյունախումբը առկա է և դշխոյ, գշխուհի «թագուհի, իշխանուհի» բառերում, որոնք դարձյալ իրանական փոխառութիւններ են: Նկատենք, որ դշխոյ-բամբիշ-թագուհի հոմանիշային շարքի բոլոր անգամներն էլ իրանական փոխառութիւններ են¹⁴:

Աիիժ «հոսումն»: Բառը չկա գրաբարի բառարաններում: Ակնհայտորեն առկա է վէժ «դուբս թափվել, հոսել» արմատը՝ է>ի օրինաչափ հնչյունափոխութիւնով: Վէժ-ը Արմ-ում ստուգաբանված է, բայց բառի իրանական բնույթը կասկած չի հարուցում. տարակարծութիւններ կարող են լինել միայն վէժ-ի իրանական այս կամ այն գուգահեռի հարաբերակցութիւնի հարցում¹⁵:

Բառն ամբողջութիւնով կարող է լինել իրանական փոխառութիւն, որտեղ a-ն ժխտական ածանց է, այլ ուրիշ բնույթի բառակազմական

11 Տե՛ս Արմ., Օրէն բառահոգովածը:

12 Է. Աղայան. Բառաքնական և ստուգաբանական հետազոտութիւններ. Երևան, 1974, էջ 23:

13 А. Г. П е р и х а н я н. Материалы к этимологическому словарю древнеармянского языка. Ереван, 1993, с. 17.

14 Նշված հոմանիշների գործածական առանձնահատկութիւնների մասին տե՛ս Լ. Հո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայերենի իրանական փոխառութիւնները. Երևան, 1990, էջ 187-188:

15 Համոզիչ է թվում լեզվաբան Է. Բենվենիստի կարծիքը, որը վիժել-ը բխեցնում է իր. vaig-ից (տե՛ս Transactions of the Philological Society. London, 1945, p. 75):

ձևույթ, որը հանդիպում է իրանական այլ փոխառություններում. համատանոյ...

ԲԵՆԴԵԿ «կազմած»: Անշուշտ, իրան. band «կապ» բաղադրիչով կազմություն է: Այդ նույն արմատից ունենք վանդակ «թելից, ճյուղերից, չվանից, ուռուց, երկաթից հյուսած որևէ բան»¹⁶: «Բառգիրք հայոցում» հիշատակված ձևը կարող է անցած լինել և թուրքերենից:

ԲՐԱՇԱԿ «ղարավանդ»: Արդի մի քանի բարբառներում գործածվում է «ավերակ, քանդված» նշանակությամբ: Աճառյանը հավանական է համարում իրանական ծագումը¹⁷: Եթե այդպես է, ապա բառն անցել է միջին իրանական լեզուներից, որի օգտին է խոսում -ակ- ձևույթը, նաև ձայնեղ բաղաձայնի իլացումը Ղարաբաղի բարբառում:

ԳԷԱԹ «ժամանակ»: Բարբառներում գործածական է ղաթ բառը տարածական իմաստով՝ «արանք, հատված» և ժամանակային՝ «ժամանակամիջոց, ժամանակային հատված»: Ամենայն հավանականությամբ արաբ. «կտոր, մաս» բառն է:

ԳՈՄՈՋԻ «մէզ»: Ակնհայտ սխալագրություն է: Ծիշտ ձևն է գոմէզ «կոփի մեզ»: Բառը հաճախական կիրառություն չունի գրաբարում և առաջին ու թերևս միակ վկայությունը Եղիշեից է. «Ձեռք առանց գումիզոյ մի լուսացին»¹⁸: Հնչյունափոխությունը հաշվի չառնելով՝ ՆՀԲ-ն և ԱԲ-ն բառի ուղիղ ձևը համարում են գումիզ-ը: Ինչ վերաբերում է «Բառգիրք հայոցի» գոմոզի ձևին, ապա դժվար թե այն լինի բարբառային ձև, քանի որ ինչպես նշեցինք, բառը հայ մատենագրության մեջ կիրառված է մեկ անգամ՝ որպես գրադաշտական կրոնին առնչվող տերմին, և «Բառգիրք հայոցի» հեղինակն էլ նկատի ուներ հենց Եղիշեի վկայած օրինակը. բացառելի չէ սխալագրության առկայությունը Եղիշեի գործի որևէ ձեռագրում, որից օգտվել է բառարանագիրը:

ԳՐՈՒԱԿ «գրոյց»: Արմ-ում դիտվում է անստույգ բառ: Աճառյանը բերում է այդ բառի մի գործածություն Գ. Մաղխատրոսից. «Անդրուատ գրուակ բոսոր անիրապէս ըմբոշխորեալ»: Վերծանելով այս տողերը՝ Հ. Աճառյանը գրուակ-ը փորձում է նույնացնել Եղիշեի գրուակ «հանցավոր» բառի հետ, բայց ավելի հավանական է համարում Երեմիայի բառարանի «գրոյց» իմաստը: Մեր կարծիքով դրուակ իրանական փոխառություն է, որի երկրորդ բաղադրիչը՝ ուակ- իրան. vak «խոսքն» է: Առաջին բաղադրիչը giriftan «վերցնել, բռնել» բայի ցի հիմքն է: Ըստ այդմ, դրուակ՝ բառացի «խոսքի բռնվել, գրուցել»:

16 Տե՛ս Արմ. վանդակ բառահոգվածը:

17 Հ. Աճառյան. Հայերեն գավառական բառարան. Թիֆլիս, 1913:

18 Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 52:

ՁԱԻՕՂ «գոռօղ, կամ բան չար, կամ վէճ, կամ նենգել ինչ»: Պետք է ենթադրել, որ բառի -օղ- բաղադրիչը Հայերենի ենթակայական դերբայի օղ(ող) ձևովն է: – Ձաւ բաղադրիչը իսկութիւնը բացահայտելուն կարող է օղնել «բան չար կամ վէճ» մեկնութիւնը, որը ենթադրել է տալիս մի արմատի առկայութիւն: «խոսք, բան, ձայն» նշանակութեամբ: Այգպիսին է հենց իրան. ZAV/ZOV արմատը/ հ.-ե. ʔghaua, ʔghau «գոչյուն»: Հիշյալ իրանական արմատը Հայերենում ներկայանում է մի շարք փոխառութիւններում՝ նգով, գաւեշտ...: Ուրեմն՝ գաւող-ի դեպքում գործ ունենք իրան. գաւ + Հայ. օղ կազմութեան հետ, որը թերևս գործածվել է որևէ գրավոր աղբյուրում կամ որևէ բարբառում, որ մեզ չի ավանդվել:

ՄԱՆԻ «խօսող»: Արմ-ը հղում է «Բառգիրք Հայոցը» առանց ստուգաբանութեան: Բառը կարելի է կապել man «մտածել»-ի հետ, որից միջ. պրս. guman «ենթադրութիւն, կարծիք» menidan «մտածել», Վ. Արաւը man-ը համարում է «հոգեկան ակտիվութեան տարբեր տեսակներ արտահայտող բայ»¹⁹: Մտածել-խոսել անցման գեպքում, թերևս բառարանագիրը նկատի է ունեցել այդ երկու հասկացութիւնների՝ որպէս բանական մարդուն բնորոշ յուրահատկութեան, ներքին կապը:

ՅԱԻԱՆ «արտաբերօղ»: Իրան. hvan «կանչել»-ը թերևս թույլ է տալիս կապ տեսնել յաւանի հետ:

ՆԱՄԵՃԱԿԱՆ «նախարար, կամ իշխան»: «Բառգիրք Հայոցը» ունի և նումեճանակ «նախադուր, կամ նախարար, կամ նախիշխան»: Արմում այս երկու բառերին Աճառյանը անգրագառնում է նամեսական բառահոգովածում: Այլ ձեռագրեր ունեն նումեճական ձևը: Հ. Ամալյանը գրում է. «Արդյո՞ք լատ. nomen բառից չի ծագում»²⁰: Առաջարկվող զուգահեռը տրամաբանական է, բայց մեր կարծիքով ավելի հավանական է աղբյուր իրան. nam «անուն» բառի հետ: Նամեճականն էլ թերևս ամբողջական փոխառութիւն է «անվանի, հռչակաւոր» նշանակութեամբ, իսկ «Բառգիրք Հայոցի» «նախարար, իշխանը» նրբիմաստային դրսևորումներից մեկը:

Հօղուտ իրանական փոխառութեան կարելի է բերել միջ. պրս. namcistik «հռչակավոր» բառը²¹: Հմմտ. նաև պրս. nami «հայտնի, անվանի»:

ՆԻԻԱՆ ԴԱԿ «տէգ, կամ պահպանակ»: Արմ-ը հղում է «Բառգիրք Հայոցը» առանց ստուգաբանութեան՝ որպէս զուգահեռ բերելով նաև նիանդակ «տեգ, նիգակ» ձևը, որը դարձյալ համարում է անստույգ բառ: Նիւանդակ բառի արտաքին-հնչյունական կողմը հուշում է բառի իրանա-

19 Տե՛ս Основы иранского языкознания: древнеиранские языки. М., 1979, с. 294.

20 Տե՛ս Բառգիրք Հայոց, էջ 416:

21 Տե՛ս Գ. Ն ա լ բ ա ն գ յ ա ն. Պահլավերեն-Հայերեն բառարան. Երևան, 1994:

կան ծագումը. ni+vand/band «կապ»+ak: Հիշյալ բառակազմական ձևույթները հաճախական են հայերենի իրանական փոխառություններում: Իմաստային գուգահեռ կարելի է համարել միջ. պրս. nivandak «կապանք, շղթա» բառը²²: Ասենք նաև, որ անկախ ստուգաբանական փաստարկներից Ն. Բյուզանգացին ՆՀԲ-ի իր լրացումներում բերում է հիշյալ բառը «նիւանգակ, տէգ, կամ պահպանակ» համապատասխան վկայություններով:

ՇԻՂՇԱՅՔ «այսք»: Բառը չկա գրաբարի ոչ մի բառարանում: Արմ-ն էլ հղում է «Բառգիրք հայոցը», բնականաբար, առանց բնագրային վկայություն: Հ. Աճառյանը տալիս է նաև բառի ստուգաբանությունը: Չանգրադառնալով բառի ստուգաբանական փաստարկներին՝ նշենք, որ մեզ հաջողվել է հիշյալ բառով գտնել երկու վկայություն՝ գասական մատենագրությունից. ահա այդ օրինակները. «Ուտեն դհաստեայս ընգ շիշաղս և ընգ սուրբս գսրբութիւնն»²³, «Զգեւս հալածեաց, գշիշաղս խոսվեաց»²⁴: Վկայված օրինակները թույլ են տալիս ճշտելու նաև բառաձևը:

ՈՒՄԱՆԱԿ «խումանակ»: Համաձայն «Բառգիրք հայոցի» ծանոթագրություն Ն^o 3468 ձեռագրում՝ ոմանակ. խումանակ, կամ ջրաման: Հ. Ամալյանը ենթագրում է, որ «ուրեմն՝ խումանակ/խմանակ նշանակում է աման, որով խմում են, ջրաման: Հմմտ. րմպանակ»²⁵: Իհարկե, ըստ հիշյալ ձեռագրի «Ջրաման» նշանակությունը Հ. Ամալյանի՝ ումանակ-ի բացատրությունը և բերվող գուգահեռը կարելի է առարկելի չհամարել: Առարկելին, գուցե, հիշյալ ձեռագրի «Ջրաման» մեկնությունն է: Հ. Աճառյանը Արմ-ում նույնպես բերում է «Բառգիրք հայոցի» ումանակ, խումանակը, գրելով՝ «Այսպես ունի Բառ. Երեմ. էջ 257. Հայտնի չէ, սակայն, թե ինչ է նշանակում խումանակ: Կա Ղրբ. Ղգ. խմանակ ձևը, որ նշանակում է «օրինակ, հայտարար, նշան, արդյունք»²⁶: Եթե «Բառգիրք հայոցի» ումանակը, իրոք, բարբառային խումանակի տարբերակն է, ապա փորձենք ստուգաբանել այն: Բառը գործածական է Ղարարաղի բարբառում. ըրագումը միէս տրսնալը հիվանդություն իմանակ ա «երագում միս տեսնելը հիվանդություն նշան է»: Խումանակ/խմանակ-ի արմատը, ամենայն հավանականությամբ, իրան. man-է, որը գրսևորում է մի շարք իմաստներ. Հմմտ. սանակ. mānā «պատկեր, երևույթ», պրս. mānā «թվում է, նման է», numūna «օրինակ, նմուշ»: Այդ արմատն է և նման բառում, որ գարձյալ իրանական փոխառություն է²⁷: -ակ- ձևույթը նույնպես բնորոշ էր իրանական, հասկապես միջինիրանական լեզուներին, ինչ վերաբերում է -խո- մասնիկին, ապա այս էլ կարելի է առնչել իրանական հս-ի հետ, որը առկա է հայերենի

22 Նույն տեղում:

23 Ե փ ր Ե մ Ա ս ո ր ի. Վեչտասան ասացուածք վասն Նիկոմիդեայ քաղաքին. («Սիրոն», 1929, էջ 188):

24 Եւսեբիոյ եպիսկոպոսի Եմեսացւոյ ճառք («Հանդես ամսօրյա», 1958, ճառ է. էջ 14):

25 Տե՛ս Բառգիրք հայոց, էջ 421:

26 Տե՛ս Արմ. Ումանակ բառահոդվածը:

27 Տե՛ս Արմ. նման բառահոդվածը:

իրանական մի շարք փոխառություններում (հնազանդ, հմայել, հնար) և այլն: Իրան. hu-ն (նախնական «լավ» նշանակությամբ, որը գիտակցվում է միայն ստուգարանորեն) որոշ գեպքերում ներկայանում է /խու/ ձևով: Հմմտ. Խոսրով անձնանունը (րառացի «լավ խոսող», պրս. xub «լավ» իրան. *hu+apah -ից):

Բացառելի չէ և հումանակ→ումանակ անցումը: Ավելացնենք նաև, որ միջ. պրս. hūmanak 1. «հենց, այնպես», 2. «նման»-ը²⁸ կարելի է աղբյուրից բարրառային խմանակի հետ:

ՌԱՓԻԿ «սիրելի»: Անշուշտ, արաբ. րաֆիդ «բարի, սիրուհի» բառն է:

ՌԻՄԱԿԱԼ «ոխակալ»: Կապ չունի՝ արգյոք արար. րամի «մեղադրել, հանդիմանել»-ի հետ:

ՍԽ «խիստ, կամ հոժ»: Ըստ Հ. Ամալյանի ծանոթագրության՝ այլ ձեռագրերում խիտ է: Ախ ձեռ. համապատասխան իմաստով մերժելի չպետք է համարել: Ղարարողի բարբառում գործառում է այդ բառը՝ «պինգ, ամուր» նշանակությամբ: Ի դեպ, նշենք, որ խիստ բառն էլ գրաբարում ունի «կարծր, պինդ, կուռ, սերտ» իմաստները:

Ստուգապես դժվար է որևէ ենթագրություն անել բարբառային սխ(սրխ) բառի ծագման վերաբերյալ, ինչպես նաև պարզել գրաբարյան խիստ, պրս. Saxt «պինգ, ամուր» և բարբառային սրխ բառերի հարաբերակցությունը:

ՍՏՆԱՆԱԻՈՐՔ «վարձաւորք»: Այլ ձեռագրում ստանաւորք: Արմ-ում՝ ստնաւոր: Անվերապահորեն չմերժելով կամ չընդունելով այս կամ այն ձևի նաև իմաստի հավաստիությունը՝ նշենք, որ գասական մատենագրության մեջ մեզ հանգիպել է նման մի բառաձև (գուցե և աղավաղ): Ահա այդ օրինակը. «Ձոր օրինակ եւ մարգարէն ասէր ցԱստուած զայնմանէ, զոր ինչ ունէրն եւ որում տիրէր. զի առցէ միւսանգամ ստանաւրս, թէ «Տէր Աստուած մեր, ստացիր զմեզ»²⁹:

ՎԱՇԻՆ «խօսակից, կամ ասակից»: Առաջին բաղադրիչը՝ վաշ, թերևս իրան. vac «խոսել» արմատն է, որը զանազան ձևերով դրսևորվում է հայերենի իրանական փոխառություններում. հմմտ. Գրուակ «խոսք» (իրան. k-c-ն օրինաչափ հնչյունափոխություն է), աւաչ «ձայն, երգ», նուաճ(ել)³⁰: Հիշյալ արմատը ենթադրելի է նաև բարգաւաճ, ամբարհաւաճ

28 Տե՛ս Գ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. նշվ. աշխ.:

29 Եւսեբիոյ եպիսկոպոսի Եմեսացւոյ ճառք («Հանդես ամսօրյա», 1959, ճառ ԺԳ, էջ 343):

30 Նուաճ(ել) Արմ-ում ստուգաբանված չէ: Բառի համոզիչ մեկնություն է առաջարկում է. Աղայանը՝ իրան. *ni-vacah/ni-ցած, ստոր, ընդ, ենթ. մասնիկով, իսկ vak/vac «խոսք, ճառ, բառ» ...նախնական «իր խոսքին ենթարկել, խոսքի տակ դցել» նշանակությամբ (տե՛ս է. Ա դ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 125-126):

բառերում: Մեզ հետաքրքրող բառն, ուրեմն, պետք է ունենար վաճին կամ վաչին ձևը: Ծ, չ>չ անցումը կարելի է դիտել որպես բարբառային արտասանություն կամ սխալագրություն: Նշենք, որ «Բառգիրք Հայոցի» ծանոթագրություններում նկատված է, որ մի շարք ձեռագրեր ունեն վաչին, վաչի ձևերը, որոնք և քննական բնագրում կարելի էր ներկայացնել որպես գլխաբառեր:

ՎԱՐԱԶ «մատն ունօզ»: Այս բացատրությունը թերևս նկատի ունի վարազի պատկերով կնիք-մատանին. Հմմտ. Բուղանդի հետևյալ օրինակը. «Եւ նա ետ բերել... աղ կնքեալ վարազ նկարագիր մատանեալ...»³¹: Գրաբարի բառարաններն ունեն վարազագիր. ըստ ՆՀԲ-ի «ուր գրեալ կամ դրոշմեալ իցէ պատկեր և նմանութիւն վարազի», ըստ ԱԲ-ի՝ «վարազի տեսքով գրած՝ կնքած, կնքող մատանի»:

ՓԻՐ «խրատ»: Բառը ունի և Արմ-ը, բայց առանց ստուգաբանության: Անշուշտ, պրս. pīr «ծեր» բառն է, որն իր մեջ ներառում է «ծերունական, հասուն, իմաստուն» նրբիմաստները: Ուշագրավ է, որ ծեր բառն էլ «Բառգիրք Հայոցում» մեկնված է «հինավուրց, կամ իմաստուն, կամ դատաւոր»: Նշենք նաև, որ բառարանի ծանոթագրություններում նկատված է, որ մի ձեռագրում փիր մեկնված է «խրատ կամ ծեր»³²:

ՎՄՈՐ «վտաւառ, կամ աղբ»: Վտաւառ գրաբարի բառարանները չունեն: Ունի միայն Արմ-ը և Աճառյանը, հիմք ընդունելով «Բառգիրք Հայոցի» «վտաւառ կամ աղբ» մեկնությունը, ենթագրում է, որ «վտաւառ նշանակում է «աղբ» ուստի թերես ուղղելի է ապաւառ»³³:

Ինչ վերաբերում է փսոր-ին, ապա այն «աղբ» իմաստով գործածվում է Ղարաբաղի բարբառում: Հ. Աճառյանը փսոր ձևը Արմ-ում նշում է փշուր բառահոգվածի բարբառային բառերի շարքում: Ա. Մարգարյանը փսոր-ին վերագրում է «1. Փշրանք: 2. Աղբ: 3. Ծոքր ճյուղ, ինչ-որ բանի շատ փոքր կտոր» իմաստները և նույնպես կապում փշուր-ի հետ³⁴:

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ СООБРАЖЕНИЯ О СЛОВАХ,
ЗАСВИДЕТЕЛЬСТВОВАННЫХ В «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ("СЛОВАРЬ
АРМЯНСКОГО ЯЗЫКА")

ЛАВРЕНТИЙ ОГАНЕСЯН

Резюме

«Բառգիրք Հայոց» — лучший словарь позднего средневековья. Его научное издание, с предисловием и комментариями, осуществлено Г. Амаляном в 1975 г. Словарь важен с точки зрения целостного рассмотрения армянской лексики, новых этимологий и других лексикологических наблюдений.

31 Փաւստոսի Բուղանդացոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 139:

32 Տե՛ս Բառգիրք Հայոց, էջ 441:

33 Տե՛ս Արմ., Վտաւառ բառահոգվածը:

34 Ա. Մ ա ռ գ ա ռ յ ա ն. Գորիսի բարբառը. Երևան, 1975, էջ 492:

1. В статье приводятся датируемые V веком подтверждения подлинности ряда засвидетельствованных в словаре слов: *ակադիմական* (философский термин), *շիղշայ* "дьявол", *ստնանաւոր* "получатель(?)".

2. Отмечается диалектный характер ряда слов: *աղու* "яд", *բրաշակ* "развалины, руины", *զէաթ* "время", *խումանակ* "знак, пример, образец", *սխ* "крепкий, прочный", *փսոր* "грязь".

3. Этимологизируется несколько слов: *այենակ* "пример, образец", *աւիժ* "течение, течка", *զրուակ* "беседа", *զաւօղ* "спор", *մանի* "говорящий", *նամեճական* "князь", *նիւանդակ* (вид оружия), *խումանակ* "знак, пример, образец".

LEXICOLOGICAL REMARKS ON SOME TERMS IN "BARGIRK HAYOTS"
("A DICTIONARY OF THE ARMENIAN LANGUAGE")

LAVRENTI HOVHANNISYAN

S u m m a r y

"Bargirk Hayots" is the best dictionary in the late medieval era. Its scholarly publication, with appropriate comments and preface, was compiled by Hayk Amalian in 1975. The dictionary is important in the respect of complex investigation of the Armenian lexicon and rendering of new etymologies.

1. The article presents new attestations of the items in the dictionary, dated in V century, as the following: *akadimakan* (a philosophical term), *širšay* "devil", *stnanawor* "receiver" (?).

2. Dialectal nature of some words is noted, such as: *ağow* "poison", *brašak* "ruins", *gəat* "time", *xowmanak* "sign, pattern, sample", *sx* "tight", *psor* "dirt".

3. Besides, a few words are etymologized, as: *ayenak* "example", "sample", *awiž* "stream", *growak* "talk, chat", *zawot* "argument, debate", *mani* "talker", *namečakan* "prince", *niwandak* (a kind of weapon), *xmanak* "sign, sample".